13051	Աթոռ	7,500.00	0.00	7,500.00	620	9	0027	1117	1127	711103	Շահագործվող	16/07/19
13052	Գրասեղան	40,000.00	0.00	40,000.00	620	05	0023	1117	1127	711103	Շահագործվող	16/07/19
13053	Փոքր պահարան	60,000.00	0.00	60,000.00	620	05	0023	1117	1127	711103	Շահագործվող	16/07/19
13054	Գրասեղան	40,000.00	0.00	40,000.00	620	9	0027	1117	1127	711103	Շահագործվող	16/07/19
13055	Փոքր պահարան	60,000.00	0.00	60,000.00	620	9	0027	1117	1127	711103	Շահագործվող	16/07/19

[illegible]

[illegible]

[illegible]

1501	Խոտի հավաքիչ-մամլիչ	5,240,000.00	700,075.57	4,539,924.43	501	15	0003	1114	1124		Շահագործվող	31/12/17
1502	Համակարգիչ ըստ կոմպլեկտ 262	127,200.00	126,836.13	363.87	610	108	0007	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1503	Բազմաֆունկցիոն ալ սարք MF 212v	57,700.00	41,104.53	16,595.47	611	108	0007	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1028	Ջեռուցիչ AKIRA	23,000.00	23,000.00	0.00	622	10	0053	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1505	Տաքացուցիչ ԷԼ. կոնվերցիոն	24,800.00	9,837.10	14,962.90	622	102	0004	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1506	Տաքացուցիչ ԷԼ. կոնվերցիոն	24,800.00	9,837.10	14,962.90	622	102	0004	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1507	Տաքացուցիչ ԷԼ. կոնվերցիոն	24,800.00	9,837.10	14,962.90	622	102	0004	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1508	Տաքացուցիչ ԷԼ. կոնվերցիոն	24,800.00	9,837.10	14,962.90	622	109	0004	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1509	Տաքացուցիչ ԷԼ. կոնվերցիոն	24,800.00	9,837.10	14,962.90	622	10	0053	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1510	<<ՀԾ հաշվապահ-7>> համակարգ 1 աշխատողի համար	298,000.00	32,114.14	265,885.86	704	108	0007	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
1511	Սերվեր	500,500.00	257,211.50	243,288.50	611	104	0008	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1512	Ծրագրային ապահովում 1 սերվերի համար	519,552.00	91,060.91	428,491.09	92	101	0029	1319	1329	711103	Շահագործվող	31/12/17
1513	Տվյալների պահոց	246,528.00	26,414.00	220,114.00	611	101	0029	1319	1329	711103	Շահագործվող	31/12/17
1514	Համակարգիչ /Cumpuiter ThinkCentre M 700 Tower	320,400.00	262,950.74	57,449.26	610	104	0008	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1515	Համակարգիչ /Cumpuiter ThinkCentre M 700 Tower	320,400.00	75,773.87	244,626.13	610	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1516	Համակարգիչ /Cumpuiter ThinkCentre M 700 Tower	320,400.00	75,773.87	244,626.13	610	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1517	Համակարգիչ /Cumpuiter ThinkCentre M 700 Tower	320,400.00	75,773.87	244,626.13	610	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17

1518	Համակարգիչ /Cumputer ThinkCentre M 700 Tower	320,400.00	75,773.87	244,626.13	610	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1519	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1520	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1521	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1522	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1523	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1524	Մոնիտոր	36,200.00	20,988.08	15,211.92	611	104	0008	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1525	Լազերային տպիչ Canon i-SENSYS	81,200.00	47,591.82	33,608.18	611	104	0008	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1526	Լազերային տպիչ Canon i-SENSYS	81,200.00	47,591.82	33,608.18	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1527	Ծրագրային ապահովում 2 սերվերի համար	934,272.00	70,070.11	864,201.89	92	101	0029	1319	1329	711103	Շահագործվող	31/12/17
1528	Պատճենահանող սարք /Canon image RUNNER 2204N/	260,400.00	124,929.03	135,470.97	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1529	Անխափան սնուցման սարք	35,500.00	17,028.92	18,471.08	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1530	Անխափան սնուցման սարք	35,500.00	17,028.92	18,471.08	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1531	Անխափան սնուցման սարք	35,500.00	17,028.92	18,471.08	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1532	Անխափան սնուցման սարք	35,500.00	17,028.92	18,471.08	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1533	Անխափան սնուցման սարք	35,500.00	17,028.92	18,471.08	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1534	Անխափան սնուցման սարք 2	172,500.00	101,133.12	71,366.88	611	104	0008	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1535	Ցանցային կոնցենտրատոր 2 LAN Switch 2	20,100.00	13,331.91	6,768.09	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17

1536	Արտաքին կրիչ /External HDD/	49,200.00	6,215.00	42,985.00	611	101	0029	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1537	Գրապահարան (500*1200*1950)	58,400.00	14,933.33	43,466.67	620	107	0004	1114	1124	711103	Շահագործվող	17/04/18
1538	Գրապահարան (500*1200*1950)	58,400.00	14,933.33	43,466.67	620	107	0004	1114	1124	711103	Շահագործվող	17/04/18
1539	Աթոռ գրասենյակային	7,300.00	1,866.67	5,433.33	620	1	0004	1119	1129	711103	Շահագործվող	17/04/18
1540	Աթոռ գրասենյակային	7,300.00	1,866.67	5,433.33	620	1	0004	1119	1129	711103	Շահագործվող	17/04/18
1541	Աթոռ գրասենյակային	7,300.00	1,866.67	5,433.33	620	1	0004	1119	1129	711103	Շահագործվող	17/04/18
1542	Աթոռ գրասենյակային	9,200.00	1,866.67	7,333.33	620	1	0004	1119	1129	711103	Շահագործվող	17/04/18
1059	Պլիտա փչովի Supemax	6,900.00	2,426.21	4,473.79	622	16	0004	1117	1127	711103	Շահագործվող	20/12/18
12104	մարզագորգ 120 մասանի	0.10	0.10	0.00	423	12	0046	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
12105	Երաժշտական նվագարկիչ	54,400.00	0.10	54,399.90	622	12	0046	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
12106	Կինոդիտման սարք	162,100.00	0.10	162,099.90	622	12	0046	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
12107	Կինոդիտման Էկրան	20,300.00	0.10	20,299.90	622	12	0046	1114	1124	711103	Շահագործվող	31/12/17
1053	Տրակտոր 3-րդ քարշային դասի ԽՏ2 15Կ-09-25	25,600,000.00	516,740.74	25,083,259.26	403	15	0003	1114	1124	711103	Շահագործվող	12/09/18
1054	Ագրոտային գուլթան ՊԳՊ-4-40- 3	2,800,000.00	56,518.52	2,743,481.48	403	15	0003	1114	1124	711103	Շահագործվող	12/09/18
1055	Կուլտիվատոր ԿՊՄ-4	2,700,000.00	54,500.00	2,645,500.00	403	15	0003	1114	1124	711103	Շահագործվող	12/09/18
1056	Շարքացան Ս2ՈՒ	5,300,000.00	106,981.48	5,193,018.52	403	15	0003	1114	1124	711103	Շահագործվող	12/09/18
0440	Scanner 2 CanoScan LiDE 120	25,500.00	14,969.48	10,530.52	611	04	0022	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
0509	Scanner 2 CanoScan LiDE 120	25,500.00	14,969.48	10,530.52	611	05	0023	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17

0441	UPS APC Back-UPS 700VA BX700UI	33,400.00	17,028.92	16,371.08	611	04	0022	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
901	Գրապահարան	35,400.00	0.10	35,399.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
902	Գրասեղան	26,900.00	1.00	26,899.00	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
903	Համակարգիչ	346,900.00	0.10	346,899.90	610	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
904	Տպիչ	57,000.00	0.10	56,999.90	611	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
905	Չիրկիզվող պահարան	53,200.00	0.10	53,199.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
906	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
907	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
908	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
909	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
910	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
911	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
912	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
913	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
914	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
915	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
916	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
917	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
918	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
919	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
920	Փափուկ աթոռ	10,100.00	0.10	10,099.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
921	Փափուկ աթոռ	6,300.00	0.10	6,299.90	620	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
922	Մոնիտոր Dell E2216H	35,800.00	20,988.08	14,811.92	611	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
923	Համակարգիչ ThinkCentre M700	320,400.00	262,950.74	57,449.26	610	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
924	Laser Printer Canon i-sensis LBP252dw	81,200.00	47,591.82	33,608.18	611	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
925	Scanner 2 CanoScan LiDE 120	25,500.00	14,969.48	10,530.52	611	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17
926	UPS APC Back-UPS 700VA BX700UI	29,000.00	17,028.92	11,971.08	611	9	0027	1119	1129	711103	Շահագործվող	31/12/17

		259,233,870	125,785,106	133,448,763								
--	--	-------------	-------------	-------------	--	--	--	--	--	--	--	--



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 82-Ն

«12» դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**








Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 25-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքներում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների գոտիավորման, հաստատման, դրույքաչափերի սահմանման և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 65-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 69-Ն որոշումը:

3. Սույն որոշման թիվ 1 հավելվածի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,3 գործակիցը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

	Կողմ՝ 8	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝		_____	_____
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝		_____	_____
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		_____	_____
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝		_____	_____
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝		_____	_____
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝		_____	_____
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝		_____	_____
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝		_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա



Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ամասիա համայնքի

ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի

թիվ 82-Ն որոշման

Տեղական տուրքերի դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար չորս հարյուր դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ինը հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ինը հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնվեց հազար դրամ,

8. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
- 4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
- 5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
- 6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

- 1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունմեկ հազար դրամ.

- 2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.

11. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով, երեք հարյուր յոթանասունհինգ դրամ:

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով, մեկ հարյուր հիսուն դրամ:

12. Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

17. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ:

2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ երեք հարյուր հազար ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Ամասիա համայնքի ղեկավար՝



Handwritten signature in blue ink.

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տեղական վճարների դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.
6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար դրամ.
7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

7.1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

բ) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան Հայաստանի Հանրապետության դրամ:

7.2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տաս Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

ե) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

զ) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափով.

է) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն հավելվածի 7.2-րդ կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափով:

7.2.1) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ:

7.2.2) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

7.3) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7.2-րդ կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

բ) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է երեք հազար դրամ.

9. Կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մեկ հարյուր դրամ. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ քսանհինգ դրամ. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ քսանհինգ դրամ, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ տաս դրամ.

13. Համայնքային ենթակառուցվածքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ չորս հազար դրամ.

14. Համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ զրո դրամ.

16. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ.

17. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ զրո դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ զրո դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ զրո դրամ.


4) մեկ ամսվա համար՝ զրո դրամ.

5) մեկ տարվա համար՝ զրո դրամ.

18. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

19. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ համաձայն 2,1 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝  Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿ**

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	500
2	1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	1000 5000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 100 խոշոր կենդանի 200
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	200
5	Ախտահանություն	1 քառ. մետր 200
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100
7	Կրծողների ոչնչացում (դետատիզացիա)	1 քառ. մետր 200
8	Արհեստական սերմնավորում	5000
10	Կենդանու հերժում	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 3000
11	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը 1000
12	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 83-Ա

«12» դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐԳՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 39.31 տոկոսի չափով՝ 260000 (երկու հարյուր վաթսու հազար) դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2019 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 70-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝	_____	_____
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝	_____	_____
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____	_____
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝	_____	_____
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝	_____	_____
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝	_____	_____
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝	_____	_____
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա



1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սյունիքի համայնքի 2020 թվականի պաշտոնաթիվ գրառմանը համաձայն Հայաստանի Հանրապետության Օրենսդիր արտոնագրի պաշտոնաթիվ գրառմանը համաձայն 32-Յ արվարձանի 260000 (երկու հարյուր մարտու հազար) դրամ:
2. Ունի կողմում նախկին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սյունիքի համայնքի սկզբաներ 2016 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2019 թվականի պաշտոնաթիվ գրառմանը համաձայն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սյունիքի համայնքի սկզբաներ 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 62-Ն որոշումն ունի կողմում նախկին մարզին թիվ 70-Ն որոշումը:
3. Որոշման ունի մեջ է նախկին 2020 թվականի հունվարի 7-ի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 84-Ա

«12» դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ
71-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.








1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների 2020 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 68-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 71-Ա որոշումը:

3. Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու՝ աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.3-1) պաշտոնը անվանացանկից հանելու և աշխատակազմում առաջին կարգի մասնագետի պաշտոն ավելացնելու առաջարկությամբ:


4. Համայնքային ծառայության պաշտոնների մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, իսկ մնացած մասով՝ 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

	Կողմ՝ 8	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝		_____	_____
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝		_____	_____
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		_____	_____
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝		_____	_____
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝		_____	_____
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝		_____	_____
ԱԼԵՔՍԱՆ ՔՈԶՈՅԱՆ՝		_____	_____
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝		_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



 Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՌԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1	Աշխատողների քանակը՝ 43
---	------------------------

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը		Ընդամենը
				(հազ. դրամ)	(հազ.դրամ)	
1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
1	Համայնքի ղեկավար	1	1	260.0	0.0	260.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	200.0	0.0	200.0
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	190.0	0.0	190.0
	Ընդամենը քաղաքական պաշտոններ	3		650.0	0.0	650.0
2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
1	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	170.0	0.0	170.0
	Ընդամենը հայեցողական պաշտոններ	1	1	170.0	0.0	170.0
3. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
1	Վարչական ղեկավար(Մերթաշատ)	1	1	170.0	0.0	170.0
2	Վարչական ղեկավար(Արեգմարտեն,Գուշեն, Ջրածոր)	3	1	180.0	0.0	540.0
3	Վարչական ղեկավար (Հովտուն)	1	1	140.0	8.0	148.0
4	Վարչական ղեկավար(Բանդիկան)	1	1	140.0	0.0	140.0
5	Վարչական ղեկավար (Ողջի, Բյուրակն)	2	1	190.0	0.0	380.0
	Ընդամենը վարչական պաշտոններ	8		820.0	8.0	1378.0
4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ						
Աշխատակազմ						
1	Աշխատակազմի քարտուղար	1	1	210.0	0.0	210.0

2	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամսաթիվի տարածքային բաժնի պետ	1	1	256.6	0.0	256.6
3	Գլխավոր մասնագետ - հաշվապահ	1	1	190.0	0.0	190.0
4	Առաջատար մասնագետ	3	1	125.0	0.0	375.0
5	Առաջին կարգի մասնագետ	3	1	112.5	0.0	337.5
6	Երկրորդ կարգի մասնագետ	8	1	95.0	0.0	760.0
	Ընդամենը համայնքային ծառայության պաշտոններ	17		989.1	0	2129.1
4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՄԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ						
1	Պահակ	1	1	89.6	0.0	89.6
2	Պահակ	1	1	92.6	0.0	92.6
3	Հավաքարար	2	1	89.6	0.0	179.2
4	Հարկային գործակալ	1	1	102.0	0.0	102.0
5	Վարորդ	1	1	110.0	0.0	110.0
6	Վարորդ	1	1	89.6	0.0	89.6
7	Էլեկտրիկ	1	1	89.6	0.0	89.6
8	Բարձրագույն բանվոր	2	1	92.6	0.0	185.2
9	Մաքրող բանվոր	1	1	89.6	0.0	89.6
10	Բանվոր	2	1	92.6	0.0	185.2
11	Մեխանիկոս	1	1	100.0	0.0	100.0
	Ընդամենը տեխնիկական սպասարկման անձնակազմ	14		1037.9	0.0	1312.8
	ԸՆԴԱՄԵՆԸ	43.0		3667.0	8.0	5639.9

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար *Հ. Կարապետյան* Հարությունյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 85-Ա

«12» դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԱՆԵ
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ», «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ», «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**







Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ
մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ամասիա համայնքի ավագանին

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի
«Նանե նախակրթարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության
աշխատակիցների քանակը՝ 19, «Համայնքային գրադարան» համայնքային ոչ
առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը՝ 8, «Մանկապատանեկան
մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների
քանակը՝ 8:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի
«Նանե նախակրթարան», «Համայնքային գրադարան», «Մանկապատանեկան
մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների
հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ թիվ 1, 2, 3
հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Նանե նախակրթարան», «Համայնքային գրադարան», «Մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2019 թվականի քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 69-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 72-Ա որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

	Կողմ՝ 8	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝		_____	_____
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝		_____	_____
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		_____	_____
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝		_____	_____
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝		_____	_____
ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝		_____	_____
ԱԼԵԲՍԱՆ ՔՈՂՈՅԱՆ՝		_____	_____
ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝		_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Զ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա



Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիայի համայնքի
ավագանու 2019 թվականի
դեկտեմբերի 12-ի 85-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱԿԵՐԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԹՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 19
2 Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 16.95

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով՝ նաև ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (դրամ)	Ընդամենը տարեկան աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	1	144000	144000	1728000
2	Մեթոդիստ	1	0.5	92618	46309	555708
3	Հաշվապահ	1	1	92618	92618	1111416
4	Դատարար	1	1	92618	92618	1111416
5	Դատարար	1	1	92618	92618	1111416
6	Դատարար	1	1	92618	92618	1111416
7	Դատարար	2	1	92618	92618	1111416
8	Երաժշտ. դատարար	1	0.75	89611	67208	806496
9	Դատարարի օգնական	1	1	89611	89611	1075332
10	Դատարարի օգնական	1	1	89611	89611	1075332
11	Դատարարի օգնական	1	1	92618	92618	1111416
12	Խոհարար	1	1	89611	89611	1075332
13	Տնտեսվար	1	1	92618	92618	1111416
14	Լվացարար	1	0.7	92618	64832	777991
15	Բուժքույր	1	1	89611	89611	1075332
16	ՊԱՀԱԿ	1	1	89611	89611	1075332
17	ՊԱՀԱԿ	1	1	89611	89611	1075332
18	Հավաքարար	1	1	89611	89611	1075332
Ընդամենը		19	16.95	1694450	1597952	19175431

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝ *Կ. Բյուրյ* Ձ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՎԵՐԱԿԱՆԱՅՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒԹՅԱՆ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի 85-Ա որոշման
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՇԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 8
2 Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 7.25

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մատվ՝ նաև ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (դրամ)	Ընդամենը տարեկան աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	1	120000	120000	1440000
2	Հաշվապահ	1	1	92618	92618	111416
3	Գրադարանավար	1	1	92618	92618	111416
4	Գրադարանավար	1	1	92618	92618	111416
5	Գրադարանավար	1	1	89611	89611	1075332
6	Գրադարանավար	1	0.75	92618	69464	833562
7	Գրադարանավար	1	1	89611	89611	1075332
8	Հավաքարար	1	0.5	89611	44806	537666
Ընդամենը		8	7.25	759305	691345	8296140



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՎԵՐԱԿԱՆԱՅՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒԹՅԱՆ

Ձ. *Բյուրա*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիայի համայնքի
ավագանու 2019 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 85-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

- 1 Աշխատակիցների թվաքանակը 8
2 Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 6

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով՝ նաև ծածկագիրը)	Հաստիք ների քանակը	Հաստիք ային	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Հնդամներ ամսական աշխատավարձ (դրամ)	Հնդամներ տարեկան աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	1	120000	120000	1440000
2	Հաշվապահ	1	1	92618	92618	1111416
3	Մարզիչ	1	1	92618	92618	1111416
4	Մարզիչ	1	0.75	92618	64463	773556
5	Մարզիչ	1	0.5	92618	46309	555708
6	Մարզիչ	1	0.5	92618	46309	555708
7	Մարզիչ	1	0.75	92618	69464	833562
8	Հավաքարար	1	0.5	92618	46309	555708
Ընդամենը		8	6	768326	578090	6937074

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Վ. Բ. Բ.* ՉԵՍՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

